

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ -ԻԻՆ(-ԵԱՆ,-ՈՒՆ)-ՈՒԱՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Հին հայերէնում -իւն ածանցով կազմուած բառերը ենթարկուած են ներքին -եան հոլովման, ինչպէս՝ արիւն, արեան, յարենէ, արեամբ, արիւնք, արեանց, արիւնս, յարեանց, արեամբք: 5-րդ եւ յետագայ դարերի գրաւոր յուշարձանների մէջ այս հոլովումը անխախտ կարգով գործում է, բացարձակ ընդհանրութեամբ, -ութիւն ածանցով կազմուած բառերի նկատմամբ (խնդութիւն-խնդութեան, քաջութիւն-քաջութեան եւ այլն). -իւն ածանցով կազմուած միւս բառերը երեւան են հանում զանազան շեղումներ, որոնք վերջապէս յանգում են հոլովման փոփոխութեան եւ -իւն ածանցով կազմուած բառերից շատերն սկսում են հոլովուել այլ հոլովումներով (մեծ մասամբ -ի, ի-ա, ոյ եւ այլն): Յենուելով 5-րդ եւ յետագայ դարերի գրաւոր յուշարձանների տուեալների վրայ, -իւն ածանցով կազմուած բառերը, ըստ հոլովման առանձնայատկութիւնների, կարելի է բաժանել հետեւեալ խմբերին:

1. Բառեր, որոնք կանոնաւորապէս ենթարկուած են միայն ներքին -եան հոլովման. դրանք են՝ -ութիւն ածանցով կազմուած բառերը եւ արիւն, արդիւն, անկիւն, կորիւն, որքիւն բառերը:

2. Բառեր, որոնք թէեւ ենթեմն հոլովում են այդ յարացոյցով (մեծ մասամբ եզակի սեռական-տրական եւ գործիական հոլովներում), սակայն մեզ աւանդուած գրաւոր յուշարձաններում յաճախ հանդիպում են այլ յարացոյցների հոլովածեւերով: Օրինակ՝ անիւն բառը թէեւ աւանդուել է անեան ձեւով («Լծեալ լինէին պարունակքն (ուղղոյ)՝ անեամբն, գոր գինին ի գոլորշացեալ բերէ»): - Բրս. «ճառք ընդդէմ արբեցողաց»), բայց շատ սովորական է անիւն, աճենի կամ աճիւնոյ յարացոյցներով հոլովումը: Մրջիւն ունի մրջեան սեռական-տրականը, բայց շատ աւելի յաճախ գործածուած է մրջիւն տարբերակի հոլովածեւերով. -գոչիւն մի քանի անգամ հանդիպում է գոչեան ձեւով, բայց սովորական է գոչման ձեւը՝ գոչումն-ից: Այդպիսի բառերից են նաեւ հերիւն, աւիւն եւ այլն, որոնք շատ սակաւ դէպքերում են աւանդուել -եան ձեւով:

3. Բառեր, որոնք գրաւոր յուշարձաններում -եան ձեւով չեն հանդիպում, ըստ որում հոլովման այդ ենթադրուող ձեւը փոխարինուել է -ումն ածանցով կազմուած տարբերակի հոլովածեւերով: Այս խմբին են պատկանում -իւն ածանցով կազմուած բայանունները (մեծ մասամբ բնաձայնական բայերից կազմուած), ինչպէս՝ շնչիւն, դողանջիւն, փայլիւն, շողիւն, խիզախիւն, դղրդիւն եւ այլն:

Այդ բոլորից առանձին է մնում թոժիւն¹, «արջի ձագ, քոթթ» բառը, որ գործածուել է միայն մէկ անգամ, Եզնիկի գրքում, եզակի հայցական հոլովով, ուստի եւ հոլովման յարացոյցի մասին ոչինչ հնարաւոր չէ ասել, թէեւ կարելի է ենթադրել -եան հոլովումը (հմտ. կորիւն-կորեան):

Միեւնոյն ածանցով կազմուած բառերի հոլովման այս անմիօրինակութիւնը ցոյց է տալիս, որ -իւն/-եան հոլովումը հինգերորդ դարում, մեր գրի ու գրականութեան հէնց սկզբնաւորման դարաշրջանում, արդէն դադարել էր կենսունակ լինելուց եւ ապրում էր իր մահացման գործընթացը: Յետագայ դարերում այդ գործընթացը յանգեց այն բանին՝ որ -իւն/-եան հոլովումը, որպէս իւրայատուկ հոլովական յարացոյց, մահացաւ. բարբառներում եւ ժողովրդախօսակցական լեզուում այդ յարացոյցը լիովին վերացաւ, իսկ ժամանակակից գրական հայերէնում -ութիւն ածանցով բառերը եւ արիւն, անկիւն բառերը դեռեւս պահպանում են սեռական-տրականի -եան եւ գործիականի -եամբ ձեւերը, թէեւ այժմ արդէն սովորական են դառնում դրանց արիւնի, անկիւնի, արիւնով, անկիւնով ձեւերը:

Հասկանալի է, որ հինգերորդ դարում արդէն որոշակիօրէն արտայայտուած մահացման գործընթացը ենթադրում է -իւն/եան հոլովման

¹ Թոժիւն բառն իրանական փոխառութիւն է՝ կազմուած հայկական իւն ածանցով (հմտ. քրդ. toeža, toežang «կենդանու ձագ»):

անկենսունակ դառնալու առաջին վաղ շրջաններում սկիզբը առնելը, իսկ սա էլ, իր հերթին, թոյլ է տալիս մեզ ընդունելու, որ այդ հոլովումը, որպես -իւն անանցով կազմուած բառերի ընդհանրական հոլովում, առաջացել է եւ կենսունակօրէն գործել հայերէնի պատմութեան հնագոյն ժամանակներում: Հոլովման այդ յարացոյցի առաջացումը մենք կապում ենք հընդեւրոպական լեզուից հայերէնի առանձնացման եւ ինքնուրոյն զարգացման պրոցեսի հետ, ըստ որում այդ հոլովման արմատները մենք գտնում ենք հնդեւրոպական նախալեզուում: Մեր հետազոտութիւնները մեզ յանգեցրել են այն հետեւութեան, որ այդ հոլովումը ծագումնաբանօրէն կապուած է հնդեւրոպական -ven/-un/-ն անանցի՝ հայերէնում կրած իւրայատուկ փոփոխութեան հետ: Հնդեւրոպական այդ անանցը, ինչպէս յայտնի է, հայերէնում պահպանուել է իր միջին եւ ստորին ձայնդարձով՝ -un եւ ո, որոնցից առաջինն ստացել է ինքնուրոյն անանցի դեր, իսկ երկրորդը վերածուել է նրա թեք հոլովների հիմքային բաղադրիչի: Այս բացատրութեան համաձայն, մենք հինհայերէնեան -իւն անանցը դիտում ենք իբրեւ բաղադրեալ անանց, որի մէջ հնդեւրոպական նախալեզուի -un անանցն է ներկայացնում -ւն մասը, իսկ ի ձայնաւորը ներկայացնում է նախալեզուեան i բունը, որ միացել է անանցին եւ դարձել նրա անբաժան տարրը: Հնդեւրոպական ձայնաւոր բների միացումը անանցներին եւ թեքման վերջաւորութիւններին հին հայերէնի հնագոյն շրջաններին այն օրինաչափութիւններից մէկն է, որոնք վերափոխել են հնդեւրոպական ձեւաբանական համակարգը եւ ձեւաւորել հայերէնի իւրայատուկ համակարգը, որ եւ հիմք է տուել Ա. Մեյլէին գրելու. «Հայերէնի հնչիւնական եւ ձեւաբանական համակարգը խորապէս տարբեր են հնդեւրոպականի նոյն համակարգերից»:

Ինչպէս ձայնաւորների եւ թեքական վերջաւորութիւնների միաձուլման երեւոյթը հիւսալիօրէն արտացոլւել է հոլովման համակարգում: Հին հայերէնն, ինչպէս յայտնի է, արտաքին թեքման համակարգում ունի բոլոր ձայնաւորներով յարացոյցներ, որոնց մէջ հիմքի ձայնաւորը՝ հոլովիչը (resp. նախկին ձայնաւոր

² A. Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, p. 144.

բները) վերածուել է հոլովական վերջաւորութեան կամ դրա անբաժանելի տարրի, գոնէ եզակի սեռական ու տրական հոլովներում: Այսպէս. հին հայերէնն ունի ա, ի, ո, ու հոլովումները (մի կողմ ենք թողնում խառն հոլովումները). վաղ ժամանակներում գոյութիւն է ունեցել նաեւ ե հոլովումը, որի հետքերն են միայն հանդիպում գրաւոր յուշարձաններում (Հմմտ. ի տուէ եւ ի գիշերի «գիշեր եւ ցերեկ», որի մէջ ի տուէ ներգոյակական հոլով է, կազմուած տրականի *տուէ < *տուեյ ձեւից):

Ձայնաւոր բների միաձուլումը անանցների հետ պարզորոշ կերպով երեւում է հնդեւրոպական միեւնոյն անանցից հայերէնում ստացուած տարբերակային ձեւերում, որոնք միմեանցից տարբերուած են միայն ձայնաւորներով: Այսպէս՝ հ.-ե. -men անանցից հայերէնում ստացուել են.

1. -ամն. եղեամն (եղի-ամն), այծեամն (այծի-ամն), պաշտամն (< պարըշտման < պարիշտման), որի գոյութիւնը թելադրում են պաշտման, պաշտմամբ, պաշտամունք եւ այլ հոլովական ձեւերը:
2. -իւմն. մըջիմն, կըճիմն եւ այլն:
3. -ումն. շարժումն, մերձեցումն եւ այլն: Հ.-ե. e/os-ti-ից ստացուել են.
1. -աստ. զգաստ, իմաստ եւ այլն:
2. -եստ. զգեստ, ուտեստ, պահեստ եւ այլն:
3. -իստ. հանգիստ:
4. -ուստ. կորուստ, հագուստ եւ այլն:

Տուեալ դէպքում մեզ համար կարեւոր չէ, թէ տարբերակային այդ ձեւերից որը ինչպիսի արգասաւորութիւն ու կենսունակութիւն ունի, կարեւորը այն է, որ իրօք նախկին բնային ձայնաւորները, վերածուելով բառակազմական հիմքերի ձայնաւորների, հայերէնում միաձուլուած են անանցներին ու դարձել նրանց անանջատելի տարրը: Այս ձեւով էլ, ահա, հ.-ե. -un անանցից (ven-ի միջին ձայնդարձը) հայերէնում ձեւաւորուել են.

1. -իւն. անկիւն, արդիւն, հերիւն եւ այլն:
2. -ուն < *ուն. ձեղուն, սրուն, մահուն եւ այլն:
3. -աւն. կրաւն (կրօն), պաշտաւն/պաշտօն (< *պարշտաւն < պարիշտաւն) եւ այլն:

Այս բոլորը մեզ հիմք են տալիս բնութագրելու հինհայերէնեան -իւն անանցը որպէս բաղադրեալ, որի հիմնական (բուն անանցային) մասը՝ -ւն, ծագում է հ.-ե. -ven/-un/-ն անանցի միջին ձայնդարձից:

Այս բնութագրութիւնը հնարաւորութիւն է տալիս բացատրելու նաեւ յիշեալ կարգի անանցաւոր բառերի սեռականի -եան ձեւի ծագումը: Մեր վերլուծութիւնների համաձայն, սեռականի այդ ձեւում նոյնպէս ունենք երկու նախնական տարր՝ ա) բուն անանցի ստորին ձայնդարձին՝ -ն-ից, օրինաչափօրէն ստացուած հայկական -ան բաղադրիչը, եւ բ) դրան նախորդող հիմքային ձայնաւորը՝ ի, որ միանալով անանցի ա ձայնաւորին, տուել է եւս երկբարբառը, ըստ որում, ինչպէս մենք ցոյց ենք տուել մեր «Գրաբարի քերականութիւն» աշխատութեան մէջ, գրային ձեւով որպէս եւս ներկայացուած երկբարբառն իրականում (հնչիւնաբանօրէն)՝ -ia երկբարբառն է⁵: Հետեւաբար, արիւն-արեան եւ նման բառերի սեռական հոլովում ունենք հայկական հողի վրայ իւն անանցից առաջացած ձեւ նախնական անանցի ձայնդարձի ստորին աստիճանից. հ.-ե. ո < հայ. -ան: Այսպէս, հայերէնի յիշեալ յարացոյցում առաջ է եկել ներքին թեքումը՝ հիմնուած ուղղական հոլովի ու եւ սեռականի ա ձայնաւորի հերթագայութեամբ:

Այս բացատրութիւնը հնարաւորութիւն է տալիս լուսաբանելու նաեւ ձիւն (սեռ. հ.

ձեան) եւ սիւն (սեռ. հ. սեան) բառերի -իւն/-եան հոլովումը: Ինչպէս յայտնի է, այդ բառերում -ւն հնչիւնակապակցութիւնն առաջացել է ոչ թէ հ.-ե.-un անանցից, այլ՝ առաջինում -օն(*ghiyom), երկրորդում՝ -օն (kiyon) անանցներից: Եւ, սակայն, հնչիւնական օրէնքների համաձայն այդ երկուսն էլ հայերէնում վերածուել են -ան հնչիւնակապակցութեան, որով եւ ստացուել է այդ բառերի -իւն երկբարբառը, որ եւ պատճառ է դարձել թեք հոլովների համաբանութեամբ կազմութեան՝ -իւն անանցով կազմուած բառերի տիպարով:

Միւս կողմից՝ -իւն անանցի ձեւաւորումը հայկական հողի վրայ, հնագոյն դարաշրջաններում (նախահայերէնում) գործած՝ օրինաչափութիւնների հիման վրայ, ինքնին թելադրում է, որ այնպիսի բառեր, ինչպիսիք են անիւն, արդիւն, արիւն, աւիւն, հերիւն եւ այլն, հայկական կազմութիւններ են -իւն անանցով, եւ նրանց համար երբեմն կանխադրուող հնդեւրոպական նախաձեւը (օրինակ՝ անկիւն բառի anken/ankon նախաձեւը) զուրկ է իրական հիմքից: Այդ բառերի համար ցեղակից լեզուների նոյնարմատ, բայց տարբեր անանցներով կազմուած նոյնիմաստ բառերի համեմատութիւնը միայն արմատի ստուգաբանութեան, ընդհանուր բառակազմութեան եւ իմաստաբանական արժէք ունի, ուստի եւ յանձնարարելի չէ անպայման ընդհանուր (թէկուզ եւ երկու-երեք լեզուների համար) նախաձեւի որոնելը կամ յօրինելը:

-իւն/-եան հոլովման մասին վերը շարադրուածը հնարաւորութիւն է տալիս նոյն յարացոյցին յատկացնելու նաեւ այնպիսի բառերի հոլովումը, ինչպիսիք են ձեղումն (սեռ. հ. ձեղուն), սրումն (սեռ. հ. սրուն), անումն (սեռ. հ. անուն), մահ (սեռ. հ. մահու եւ մահուն): Այս բառերի կազմութիւնը (բացի մահ բառից) եւ հոլովումը նոյն ծագումն ունեն, ինչ որ -իւն անանցով կազմուած բառերինը, այն տարբերութեամբ միայն, որ դրանց անանցին ձուլուել է ոչ թէ հիմքային i, այլ u ձայնաւորը: Ըստ այսմ, ձեղումն, սրումն, անումն բառերի մէջ ունենք նախնական հիմքային ձայնաւոր՝ u + un անանց > ունն, որից էլ՝ ու ձայնաւորից յետոյ l-ի օրինաչափ անկման հետեւանքով՝ -ումն: Սրանից էլ բխում է այն, որ այդ բառերի ուղղական եւ սեռական-տրական հոլովաձեւերի յարաբերութիւնը նոյնն է, ինչ որ -իւն անանցով կազմուածներինը: Ինչպէս որ i-un եւ

⁵ Գրութեան մէջ ia երկբարբառը եւ եւ տառերի կապակցութեամբ ներկայացնելը մի նպատակ է հետապնդել. տարբերել իա ձայնաւորական կապակցութիւնը իա երկբարբառից: Հին հայերէնում ունենք մի կողմից՝ միասին (մի-ասին), քիակ (թի-ակ), միւս կողմից՝ պատանեակ (պա-տա-նեակ), որդի-ակ > որդեակ (որ-դեակ) եւ այլն: Ահա այս երկրորդ կարգի հնչիւնակապակցութիւնը, որ կազմում է ia երկբարբառը, առաջինից տարբերելու համար, Մեսրոպ Մաշտոց օգտագործեց եւ տառը՝ ia երկբարբառը գրելով եւս, քանի որ մեր եւ տառը մեսրոպեան ուղղագրութեան մէջ ա ձայնաւորից առաջ ուրիշ ոչ մի դէպքում չի կարող գրուել:

i-ն տուել են -իւն եւ -եան (ian), այնպէս էլ u-un եւ u-ն տուել են ուն > ուն եւ -ուան: Առանձին ուշադրութեան է արժանի մահ բառի մահուան սեռականը. այս բառն ունի նաեւ սեռականի մահու ձեւը, որ կանխադրել է տալիս բնի օ կամ u ձայնաւորը, հասկանալի է, մահ ուղղականի օրինական սեռականն է: Ինչ վերաբերում է սեռականի մահուան ձեւին, ապա դրա համար պէտք է ենթադրել ուղղակա- նի մահուան < *մահուան < մահու + un ձեւը: Մեր ամբողջ հին մատենագրութեան մէջ այդ ձեւը չի գործածուել, եւ բարբառներն էլ, ըստ եղած ուսումնասիրութիւնների եւ բառա- լանների, այդպիսի բառ չունեն, սակայն երկու տուեալ մեզ հիմք են տալիս ընդունելու մահուան բառի գոյութիւնը հնագոյն ժամանակ- ներում: Առաջինը՝ բարբառների մահման ձեւն է, որ անառարկելիօրէն ենթադրում է ուղղակա- նի մահումն ձեւ. եւ եթէ մենք ունեցել ենք կամ ունենք մրջիմն եւ մրջիւն, անուն եւ անու(ն), պաշտան եւ պաշտամն, ապա բոլորովին էլ անհասկանալի է, որ ունեցած լինենք նաեւ մահումն եւ մահուան գոլգահեռ ձեւերը: Երկրորդ տուեալը Մեղրու (որքան մեզ յայտնի է նաեւ Կարճեանի ու Կաքաւաբերդի) բարբառի մրհնօրէ «մահուան օրուայ» բառն է, որ գործածուած է մրհնօրէ շուրթաբ «մահուան օրուայ գգեստ» եւ մրհնօրէ պատանգ «մահուան օրուայ պատան» կայուն բառակապակ- ցութիւններում: Այդ բառը, ինչպէս պարզ կեր- պով երեւում է, կազմուած է երկու բաղադրիչից՝ մրհն- եւ օրէ. երկրորդ բաղադրիչը հայերէնի օրեայ բառն է (երկօրեայ, բազմօրեայ եւ այլն)՝ Մեղրու բարբառին յատուկ հնչիւնական օրի- նաչափ փոփոխութիւններով, իսկ առաջին բաղադրիչի համար պէտք է կանխադրել մա- հուն կամ մահին ձեւով մի բառ: Պարզ է, որ դրանցից ճիշտն է մահուանը, որ համընկնում է մահուան սեռականի համար մեր ենթադրած ուղղականի ձեւին եւ հաստատում դրա գոյու- թիւնը հնագոյն ժամանակներում: Ընդունելով մահուան (սեռ. հ. մահուան), մահումն (սեռ. հ. մահման), մահ (սեռ. հ. մահու) բառերի գոլգա- հեռ գոյութիւնը եւ առաջին երկուսը համարելով բառային տարբերակներ (միեւնոյն արմատից տարբեր համանիչ ածանցներով կազմուած նոյ- նիմաստ բառեր), մենք կարծում ենք, որ դը- րանք, որպէս բայանուններ, արտայայտել են պրոցեսի իմաստ (մեռնելը, մահանալը), իսկ

մահ բառը նշանակել է երեւոյթը: Այս տարբե- րութեան արտայայտութիւնը հնարաւոր է գրտ- նել հինգերորդ դարի մատենագրութեան մէջ՝ մահու եւ մահուան ձեւերի գործածութիւն- ներում (հմմտ. մահու եւ կեանաց «մահուան եւ կեանքի», մահու մեռանել «մահուամբ մեռ- նել», բայց՝ ի մահուան իւրում «իր մահուան ժամանակ»): Ըստ մեր դիտարկումների, մահու ձեւը առաւելապէս գործածուած է այն դէպքե- րում, երբ խօսքը վերաբերում է մահուան, որպէս երեւոյթի, իսկ մահուան ձեւը՝ պրոցեսի եւ ժա- մանակի:

Վերը շարադրուածը մեզ թոյլ է տալիս վերա- նայելու նաեւ հնչիւնական մի օրէնք: Ինչպէս յայտնի է, հայագէտներից ոմանք ընդունում են, որ հնդեւրոպական m հնչիւնը ու ձայնաւո- րից յետոյ դառնում է ւ (վ), ապա ընկնում, քա- նի որ հին հայերէնում ուվ կամ ոււ կապակ- ցութիւն չի կարող լինել: Ա. Մեյէ, օրինակ, այդպէս է բացատրում անուն ձեւի ծագումը հ.-ե. (o)nomn-ից, իբրեւ հաստատող օրինակ յիշելով պաշտան, սեռ. հ. պաշտաման բառը: Անուն, ձեղուն, սրուն բառերի կազմութեան մասին մեր տուած բացատրութիւնը ցոյց է տա- լիս, որ դրանց մէջ m > v հնչիւնափոխութիւն չկայ. Պաշտան բառն էլ, ինչպէս ցոյց տուինք, կազմուել է -անն ածանցով (< պարիչտ- աւն > պարչտան). սեռականի պաշտաման ձեւը թելադրում է ուղղականի պաշտաման ձեւը: Այս երկրորդի թեք հոլովների գործա- ծութիւնը պաշտան տարբերակի համար բա- ցատրում է ենթադրուող պաշտանան (պաշտան տարբերակի) եւ պաշտաման (պաշտամն տարբերակի) իրար շատ նման ձեւե- րի նոյնացումով: Այստեղ էլ մենք ունենք նոյն երեւոյթը, ինչ որ տեսանք մահ, սեռ. հ. մահու եւ մահուան գոլգահեռ հոլովաձեւերի մասին խօսելիս. մահուան եղել է մահուան բառի սեռականի ձեւը, որ, սակայն, անցել է մահ բառին եւ այսօր էլ դրա սեռական հոլովի կանո- նական ձեւն է, մինչդեռ պատմականօրէն կա- նոնաւոր մահու ձեւը մահացել է: Ճիշտ այդպէս էլ, անուն ձեւի համար պէտք է կանխադրել ոչ թէ օ/anomn ձեւ եւ ենթադրել m > v հնչիւ- նափոխութիւն եւ անկում (anumn > անուան- > անուան, սեռ. հ. անուան), այլ -men ածանցի փոխարէն -un/-ն ածանցով կազմութիւն՝ հ.ե.

*օ, en/օ, օն արմատից⁴. օ, on-un > անուան > անուն, սեռ. հ. օ, onu-n > անուան: Այս մեկնութիւնը մի կողմից վերացնում է m/v անի- րական հնչիւնափոխութիւն կանխադրելու ան- հրաժեշտութիւնը, միւս կողմից երեւան բերում հնդեւրոպական nomn նախաձեւին գոլգահեռ *no-ven > ու-un տարբերակը, որով հայերէնի անուն բառը անում (անումն < nomn) տար- բերակի առկայութեան պայմաններում, ստա- նում է հ.ե. բացառիկ հնաբանութեան արժէք:

⁴ Հ.ե. *օ, en-/օ, on արմատի մասին տե՛ս E. Bénveniste, *Origine de la formation des noms en indo-européen*, 2^{me} tirage, Paris, 1935, p. 181.
⁵ Ընդունում է, որ այդ բառերի սեռականը ձեւացել է գործիականի տաւք (*dm-bhi) եւ շաւք (kypn-bhi) հիմքի ընդհանրացմամբ (տե՛ս Գ. Բ. Ջահուկեան, Հին հայերէնի հոլովման սիստեմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 175-176):

Վերջապէս, անդրադառնալով -իւն/-եան եւ ուն/ուան հերթագայութիւններով հոլովման, վերը շարադրուածի հիման վրայ մենք այդ եր- կու յարացոյցները պատմականօրէն (ծագում- նաբանօրէն) նոյնացնում ենք որպէս ու/ա հեր- թագայութեամբ հոլովում, ըստ որում ինչ- պէս արիւն ա-րեան, այնպէս էլ ձեղուն (ձե- դուն) – ձեղուն ձեւերում ունենք ւ-ա հեր- թագայութիւնը, որով եւ ստացում են -եան (ian) եւ -ուան երկբարբառները: Սա մեզ հնա- լաւորութիւն է տալիս այդ յարացոյցին յատ- կացնել նաեւ տուն (սեռ. հ. տան) եւ շուն (սեռ. հ. շան) բառերի հոլովումը, թէեւ այս բառերի ու-ա հերթագայութիւնը բոլորովին այլ ծագում ունի⁵:

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐՍՏԻ ԱՂԱՅԵԱՆ